# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## N «ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ-3» ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան «26» օգոստոսի, 2022թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Մխիթարյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Վ. Մխիթարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հիմք ընդունելով 2022 թվականի հունվարի 10-ին կնքված N «**ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ-3**» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթը, Պայմանագրի Կողմերը համաձայնեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1 Պայմանագրի ընդհանուր գինը ավելացնել 864 000 ՀՀ դրամով և սահմանել «1 584 000» (Մեկ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ», ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց հանդիսացող Հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

1.3 Պայմանագրի վճարման ժամանակացույց հանդիսացող հավելված N2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N2-ի:

1.4 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N2) նախատեսված չափերով և ամիսներին:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից:

2.2 Սույն համաձայնագիրը Պայմանագրի անբաժանելի մասն է:

2.3 Սույն համաձայնագրում չնշված պարտավորությունները Պայմանագրում թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ<br>ք. Երևան, Պուշկինի 56ա<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011023067<br>ՀՎՀՀ 02572073 | «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6<br>Ամերիաբանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1570020836060100<br>ՀՎՀՀ 02617951 |
| ------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | ------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը** |
| 1 | 48221200/1 | «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն՝ 51-100 օգտվողի համար.<br><br>1. Օգտվողների սպասարկում բազմագիծ հեռախոսագծով սպասարկման կենտրոնով աշխատանքային օրերին եւ ժամերին (5/8),<br><br>2. Համակարգի ընթացիկ բոլոր թարմացումների եւ նորացումների անվճար տեղադրում, բացառությամբ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքում,<br><br>3. Պատվիրատուի պահանջով կատարել սերվերների օպերացիոն համակարգերի տեղադրում, համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր,<br><br>4. Կատարել սերվերների ծրագրային ապահովման, օպերացիոն համակարգերի թարմացում ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար, | դրամ | 1 584 000 | 1 | Ք. Երևան , Պուշկինի 56ա | 2022 թվականի սեպտեմբերից 2022 թվականի դեկտեմբեր: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5. Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում,<br><br>6. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում: Թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝<br><br>ա) անհետաձգելի թերություններ - որոնք են համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերությունները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը,<br><br>բ) ոչ անհետաձգելի թերություններ – աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպման և համակարգի առանձին մոդուլների կամ հնարավորությունների առավել հարմար, ճշգրիտ եւ արդյունավետ իրականացմանն առնչվող խնդիրները:<br><br>7. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրած պայմաններով համակարգում մուտքագրված գրությունների տարբեր փուլերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում,<br><br>8. Պատվիրատուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 9. Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում,<br><br>10. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից,<br><br>11. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում և առանձին մոդուլներում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացում,<br><br>12. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում,<br><br>13. Պատվիրատուի պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում,<br><br>14. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխություններ և լրացումներ,<br><br>15. Համակարգի հետ աշխատող պատվիրատուի անձնակազմի տեխնիկական աջակցություն: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 16. «Mulberry Groupware 2.0» համակարգում զանգերի միասնական կենտրոնի ավելացում, որը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից սահմանված դաշտերով զանգի տվյալների գրանցումը, որոնք պետք է ինքնաշխատ փոխանցվեն «Mulberry Groupware 2.0» համակարգ զանգի ձայնագրության հետ միասին:<br><br>17. Զանգերի կենտրոնը պետք ապահովի «Mulberry Groupware 2.0» համակարգում գրանցված գործից զանգի կատարումը և զանգի ձայնագրությունը որպես կից նյութ պահպանումը:<br><br>18. Զանգերի կենտրոնը պետք է ապահովի համաժամանակյա զանգերի քանակի փոփոխություն՝ ըստ Պատվիրատուի պահանջի: | | | | | |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«26» օգոստոսի 2022 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*10.01.2022թ «ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ-3» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 48221200/1 | Համացանցային (վեբ) սերվերների համակարգչային ծրագրային փաթեթներ | 1 584 000 | 1 584 000 | 1 584 000 | 1 584 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

Կառավարությունը
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

Կառավարությունը
Կ.Տ.